

Ի՞ՆՉ ԿԸ ՄՊԱՍՈՒԻ ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆԱՅՈՒԱԾ ՍՓԻՒՌԷՆ

Posted on June 10, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



[Keghart.org](https://keghart.org)-ի խմբագրական կազմի անդամներէն Դոկտ. Մինաս Գոճայեան մեկնարկած է Նոր հաղորդաշար մը «ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ» անունով, որուն նպատակն է հանրութիւնը իրազեկել հայրենիքի թէ արտերկրի հայութեան մէջ ծաւալուող անցուդարձերուն եւ երեւոյթներուն: Ընթացքին՝ հարցազրոյցներով եւ հաղորդումներով պիտի աշխատի լուսաբանել ազգային, քաղաքական եւ հասարակական իրադարձութիւններ: Մեկնարկուածը անկուսակցական ծրագիր մըն է, կը հաւատայ ազատական ու ժողովրդավարական սկզբունքներու եւ ազատ խօսքի իրաւունքի:

[Սկիզբ՝ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ հաղորդաշարի](#) (13 Մարտ 2021)

Յարուք Տէր Դաւիթեան կ'ապրի Լոս Անճելըս, պատմաբան է, ազգային-հասարակական գործիչ, հրապարակագիր, «Նոր Սերունդ Մշակութային Միութեան» ղեկավար մարմնի անդամ եւ «Մասիս» շաբաթաթերթի (Լոս Անճելըս) աշխատակից: Շահեկան եւ ընթացիկ հարցերու մասին իր գրութիւններով յաճախ հանդէս եկած է նաեւ keghart.org-ի մէջ: Այս հարցազրոյցին մէջ ան կ'անդրադառնայ մեր հայրենիքն ու սփիւռքը յուզող կարեւոր խնդիրներուն, անցեալի մասին կ'ընէ իր քննադատութիւնները եւ կը յայտնէ իր թելադրութիւններն ու առաջարկութիւնները, որպէսզի մենք համապատասխան դասեր քաղենք պատմութենէն:

Ստորեւ կը ներկայացնենք նաեւ Ազգային Ժողովրդավարական Բեւեռի հիմնադիր կազմի անդամ եւ Հայաստանի Հանրապետութեան վարչապետի պաշտօնի թեկնածու Բժ. ՎԱՀԷ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ հետ իր հարցազրոյցը: Կը յուսանք մեր ընթերցողները պիտի ծանօթանան ո՛չ նախկին եւ ո՛չ ներկայ իշխանական համակարգին պատկանող թեկնածուին քաղաքական, ընկերային եւ ազգային քաղաքականութեան դրոյթներուն հետ: Ան տեղ-տեղ յատուկ կերպով կը դիմէ սփիւռքահայութեան լայն հատուածներուն:
<https://www.youtube.com/watch?v=-xLolocuY14>

There are no comments yet.